

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 մարտի 2003 թվականի N 237-Ն
ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՏՈՒԿ, ԿԱՐԵՎՈՐ ԵՎ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՇԱՆՈՒԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

"Սեյսմիկ պաշտպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի "գ" կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել սեյսմիկ պաշտպանության բնագավառում հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների շարքը չդասվող օբյեկտներն ընդհանուր նշանակության օբյեկտներ են:
3. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության մարզպետներին և Երևանի քաղաքապետին՝ երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն ներկայացնել համակարգի սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների ցանկը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

**2003թ. մարտ 18
Երևան**

Ց Ա Ն Կ

**ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՏՈՒԿ ԵՎ
ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ**

1. Հատուկ նշանակության օբյեկտները պետության բնականոն գործունեությունը և աղետների կառավարումն ապահովող օբյեկտներն են, որոնց գործունեության խափանումը կարող է հանգեցնել բնակչության և շրջակա միջավայրի համար անկախատեսելի հետևանքների:
- Հատուկ նշանակության օբյեկտներն են՝
- ա) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների շենքերն ու շինությունները:
 - բ) Հայկական ատոմային էլեկտրակայանը,
 - գ) "Նաիրիտ – Ռանսաթ" փակ բաժնետիրական ընկերությունը,
 - դ) խոշոր ջրամբարները, որոնց պատվարի բարձրությունը 15 ու ավելի մետր է, և ունեն մեկ մլն ու ավելի խոր. մետր տարողություն,
 - ե) "Որոտան-Արփա-Սևան" թունելը,
 - զ) այն օբյեկտները, որոնցում արտադրվում, օգտագործվում կամ պահպանվում են վտանգավոր նյութեր՝ 500 կգ և ավելի քանակով,
 - է) "Զվարթնոց", "Շիրակ" և "Ստեփանավան" օդանավակայանները,
 - ը) Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտենը,
 - թ) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի շենքերն ու շինությունները,
 - ժ) պետական սեփականություն հանդիսացող հեռուստառադիոկենտրոնները և հեռուստաաշտարակները, կապի համակարգի շենքերն ու շինությունները,
 - ժա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պաշտպանվող շենքերն ու շինությունները,
 - ժբ) դիվանագիտական ներկայացուցչությունների շենքերն ու շինությունները,
 - ժգ) բանկերը, դատարանները:
2. Կարևոր նշանակության օբյեկտները բնակչության բնականոն կենսագործունեությունն ապահովող օբյեկտներն են, ինչպես նաև այն օբյեկտները, որոնցում կարող են միաժամանակ գտնվել 100 և ավելի մարդ:
- Կարևոր նշանակության օբյեկտներն են՝
- ա) հիդրոէլեկտրակայանները, ջերմաէլեկտրակայանները՝ 25 ՄՎտ և ավելի հզորությամբ:
 - բ) էներգետիկայի և ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների շենքերն ու շինությունները,
 - գ) հանրապետական, միջպետական և մարտավարական նշանակության ավտոմոբիլային ու երկաթուղային ճանապարհները, կամուրջները, ուղեանցները, թունելները, ինչպես նաև երկաթուղային ու ավտոտրանսպորտային կայանները,
 - դ) բարձր ճնշման գազատարները, գազապահեստները, օրվա կարգավորման ջրամբարները՝ 500 խոր. մետր և ավելի ծավալով, մեկ և ավելի խոր.մ/վրկ ջրի թողունակություն ունեցող ջրանցքներն ու թունելները, ջրահավաք կառույցները (կապտաժներ), խմելու ջրի և կեղտաջրերի մաքրման կայանները, քաղաքների ջրամատակարարումն ապահովող պոմպակայանների, ջրային համակարգերը (ակվեդուկներ, դյուկներ, թունելներ, խոշոր ջրհան կայաններ, բարձր ճնշման խողովակաշարեր և այլն),

- ե) այրադաշններ՝ 50 տ/օր և ավելի արտադրողականությամբ, հացաթխման գործարանները՝ 5000 կգ/օր և ավելի արտադրողականությամբ,
- զ) շրջանային ջերմակայանները և 10գկալ /ժամ արտադրողականությունից բարձր ջերմամատակարարման կաթսայատները,
- է) արդյունաբերության, ընդերքօգտագործման, ագրոարդյունաբերության և այլ արտադրական նշանակության շենքերն ու շինությունները,
- ը) հիվանդանոցները, առողջարանները, հանգստի և զբոսաշրջության շենքերն ու շինությունները՝ 300 և ավելի մահճակալով,
- թ) ուսումնական հաստատությունները, այդ թվում՝ դպրոցները, մանկատները, հաշմանդամների տուն ինտերնատները՝ 300 և ավելի տեղով:
- ժ) հյուանոցները, մոթելները և այլն՝ 300 ու ավելի տեղով:
- ժա) մարզադաշտերը՝ 5000 և ավելի տեղով, ունիվերսալ մարզադահլիճները, փակ լողավազանները,
- ժբ) առևտրի կենտրոնները, հանրախանութները և տոնավաճառները՝ 2000 քառ. մետր և ավելի մակերեսով,
- ժգ) հանրային սննդի օբյեկտները՝ ռեստորաններ, սրճարաններ և այլն՝ 200 և ավելի տեղով:
- ժդ) թանգարանները, պատկերասրահները ցուցահանդեսային շենքերը՝ 1000 քառ. մետր և ավելի մակերեսով,
- ժե) գրադարանները, արխիվները՝ մեկ մլն և ավելի միավորով,
- ժզ) մշակույթի կենտրոնները, թատրոնները, կրկեսները, կինոթատրոնները 300 և ավելի նստատեղերով,
- ժէ) բազմահարկ (4 և ավելի հարկ) բնակելի շենքերը,
- ժը) արտադրական շինությունները, որտեղ միաժամանակ աշխատում են 300-ից ավելի աշխատողներ,
- ժթ) եկեղեցիները և վանական համալիրները:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ՆԱԽԱՐԱՐ**

Մ. ԹՈՓՈՒԶՅԱՆ